5 *եւ միաբանքս էտուն մեզ Գ պատարագ ի տաւնի Աբրահամու*
6 *եւ Խորենա։ Որչափ կենդանի ենք Ռուզուդանս եւ հետ անց-*
7 *ման մերո՝ Բ Աբրահամու եւ Ա Արզուին։ Կատարիչք աւ(ր)հ(ն)ին յԱ̅յ։*

Ծանոթություն.— Սիմեոն *Շոթոռկա որդին վանքի առաջնորդ չէ, որովհետև այս արձանագրության մեջ առաջնորդ չի անվանվել և այլ արձանագրությունների մեջ էլ, այդ թվականներին (1257—1275) վանքի առաջնորդ հիշատակվում է Կիրակոս Վարդապետը։ Այս արձանագրությունից երևում է, որ նա նույնիսկ հոգևորական էլ չի, որովհետև որևէ տիտղոս (հայր, վարդապետ, առաջնորդ, տէր են) հոգևորականություն ցույց տվող, նա չի ունեցել։ Բայց քանի որ նա իշխանություն է ունեցել վանքի ներքին գործերի վերաբերյալ կարգադրություններ անելու, պետք է ենթադրենք, որ Սիմեոն Շոթոռկա որդին Սանահնում եղել է իշխանավոր։ Գարեգին արքեպ. Հովսեփյանը, նկատի ունենալով Շոթոռկի մյուս որդու՝ Դավիթի արձանագրությունները Հաղբատում և այլ տեղերում, գրում է. «Նշանակում է Դավիթը տեղական իշխան էր Հաղբատի և Սանահնի միջև ընկած մի երկրամասի»[1]։*

Տարբերերցում.— *1.* Արզոյն *անձնանունը* Ջալ *կարդացել է* Մարզայն, *իսկ* Դրիմ՝ Մարզոյն:

2. Մեր որդին Քամքամն Ջալ *կարդացել է և* Մերուդին Մամքան, *իսկ* Դրիմ՝ Մերուդին և Մաքան:

3. Ջալ *և* Դրիմ Ռուզուդանս և հետ անցման մերո Բ Աբրահամու և Ա Արզուին *չեն ընդօրինակել։*

120. Նախորդի կողքին

(Լուս. № 75)

Հ ՉԸ Մ 1259

Հրատարակված է՝ Ջալ 37, Դրիմ 61, Վիմ 102

1 *ի Թվիս ՉԸ։ Կամաւն Ա̅յ, ես՝ Մխիթար միաբանե-*
2 *ցս յուսով ս̅բ Ա̅ծածնիս եւ ետու զ-*
3 *իմ գրամագին այգին, որ ի Բերդիկ՝, ի գրատ-*
4 *ունս, ի քաւութիւն հոգոյ իմո։ Արդ, ով զ-*
5 *այն այգին հանէ ի գրատանէս, որոչեսցի ի փառա-*
6 *ց որդոյն Ա̅յ։ Եւ ես՝ վ̅դ Աւէտիս, առաջնորդ ս̅բ ուխտի-*
7 *ս ամէն միաբանաւքս տուաք Ա պատարագ ի տաւնի Կիւրղի։*

Տարբերերցում.— *1. 6-րդ տողում* Դրիմ վդ Աւետիս *կարդացել է* Վարդան վարդապետ:

[1] *Գարեգին արքեպ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պրակ Ա, Երուսաղեմ, 1935, էջ 32։*